

Վին իր զերբը Ալիշանի հանդէս՝ երբ դայն
կը համեմատէ տիրացու Տէրոյեանցի մը
հետ, համարելով զանոնք միեւնոյն ուղի
ու մտայնութեան տէր մարդեր, որոնք ե-
կած անցած են հայ զրական կեանքի պատ-
մութեան ընթացքին: Զարմանալի է նաև
Շանթի «Հին աստուածները» թատերական
կողական զործին նկատմամբ իր բռնած
զերբը. եւ այսպէս երկար է շարքը, որոնց
մասին խօսելու տեղը չէ այս հակիրճ տո-
ղերու արձանագրութեան մէջ: Միւս կող-
մէն հայ զրականութիւնը Օչականի երախ-
տապարտ ըլլալու է պարզապէս այն զա-
ղապարին, այն ձեռնարկին համար՝ որ
մտցուց ան մաքրագործումի սկզբունքը
զործադրելով. թէ ան միշտ ուղղադատ
չեղաւ այս սկզբունքի զործադրութեան
մէջ, սակայն ոտքի բռնեց սկզբունքը, եւ
հոս ան մեծ արժէք ունի:

Ան կատարեց իր դործը, թողուց տալա-
դիր եւ անտիպ բաղմամբ իւ երկեր որպէս զի
ուրբէններ ալ իրաւամբ զինքը քննադատեն :
Եթէ սրտի տկարութիւնը չզոյեառնէր զինքը ,
ան թերեւս ունէր իրադործելիք ծրար իրեներ
եւ թերեւս աւելի ալ կարող զբաժ անտիպ-
ներու հրատարակութիւնը՝ պիտի մեկնէր
աշխարհէն :

Անշուշտ Գաղութահայ Միութիւններ, եւ
Կամ Հայ Սովետական Իշխանութեան Պետ-
հրատը պիտի փութան հատորներու մէջ
ամփոփել իր ձեռագիրները, կորուստէ
փրկելու համար դանտնք:

«Բաղմալէսը» կը մաղթէ հանդիսոտ իր
սօճիւններուն :

lvUß.

ԷԶ ՄԸ ՅՈՒՇԵՐԷՍ

Զուիցելիայէն չլերադարձիս իննըսունական (թուականներուն), ուր մեկնած էինք Հասդիւղի եւ շրջականներուն ջարդերէն յետոյ, արդարեւ մասնաւորապէս զգացինք այն ճնշիչ մթնոլորտը որ Սուլթան Համիտի բռնապետութիւնը ստեղծած էր ու հետզհետէ աւելի կապարտային կը դառնար եւ հայրենաբաղձութիւնը կու տար լայն հորիզոններու. զարմանքով ու հրեմունանքով զխտեցի թէ Պոլսոյ հայ զբաղանութիւնը մնացած էր կենսունակ:

Իրաւ է որ Հայրենաշունչ, խանդավառ
 զրուժիւններ միմիայն մտաւորականներու
 զարակներուն մէջ զոյգութիւն ունէին, սա-
 կայն կային միշտ կարող զրոգներ, կային
 բանաստեղծներ, կային բանասէրներ :

Ասուպներու պէս զրաւան, փրկութեամբ
յական պարբերաթերթեր կու գային ու
կ'երթային, «Մասիս»ը, Տիգրան Արփիա-
րին «Մասիս»ը կը մնար մշտական: Ծլած
էր նոր ծագիկ մը, Արամ Անտոնեանին
«Ծագիկ»ը: Ան կոչուած էր զրաւան խըն-
ջոյք մը ըլլալու:

«Արեւելք» ու «Բիւզանդիոն» երկու մըր-
ցակիցներ, երկու աջքառու օրաթերթեր,
Հակառակ ամէն սեղմումի, Հակառակ նոյն
խտի Հայ «ժողովուրդի»ներու տեսական Հա-
լածանքներուն, միջոցը կը զանէին ճոխ ու
չահեկան ըլլալու. անոնք անունդն էին մը-
տաւորականութեան, որ կը ցաւիմ ըսելու,
աւելի ստուար թիւ մը եւ աւելի նշանակե-
լի տարր մը կը կազմէին, քան յետոյ ոչ
մէկ տեղ:

Հոն մտաւորականը զիտէր մնալ իր մա-
կարդակին վրայ, զիտէր թէ իր ունեցածը
բարոյական ոյժ մ'է որ զբամով չի ստաց-
ուիր, և ժողովուրդն ալ զիտէր յարգել
մտքի, զրիչի մարդը, աւելի քան բոլոր
մեծատունները, որոնք իրենց կարգին զբա-
ղէտները կը մեծարէին :

«Արևելեք» ունենալով արտօնատէր Զա-
րեհ Եղևուֆեան եւ խմբադիր Հրանդ Ա-
սատուր եւ Գրիգոր Զօհրապ, ընտրեալ աշ-
խատակիցներով աւելի զբաղան էր, թե-
րեւս աւելի աղնուական, աւելի նրբանուրբ
խնամքով պատրաստուած, բայց «Բիւզան-
դիոն» իր կուռ խմբադրականներով որոնց
մէջ Հկար երբեք որ եւ է ճիւղ, այլ հոն հե-
ղեղի մը սկէս կը հոսէին ընկերական, քա-
ղաքական երբեմն ալ զբաղան նիւթերու
չուրջ խորհրդածութիւններ, յստակ, վը-
ճիտ, համոզող, աւելի ժողովրդական էր
եւ սիրուած: Բիւզանդ Գեհեան իր օրա-
դրոյի տաղանդը ի յայտ կը բերէր անմը-
ցեյիօրէն: Ան կարծես ծնած էր խմբադիր:

Աղեքսանդր Փանոսեան իր ճոխ յանդերու
տարաւիւր կը թափէր ամէն կողմ. ունէր
հիացողներ, եւ իր ոտանաւորները կ'ար-
տասանուէին դալորցիներու մէջ, միջակ
միտքերը կը դմալլէին անոր վրայ:

Գրելիւոր Զօհրապի նորալէսերը ձեռք
 ձեռք կը խլուէին. անոր աշխարհաբարը
 թէեւ փոքր ինչ տկար, բայց ընդհանուր
 յանդուզն յղացումները, եւրոպականացած
 ողին, խորունկ հոգեբանութիւնը, անոնց
 թանկազին արժէք մը կու տային. ան կը
 թատմէր առանց ջանք ընելու, առանց հիւ-
 ցընելու տենչի, եւ թերեւս ասոր համար
 մէկ հատիկ էր:

Լեւոն Բաշաբեկեանը, ղեկ շատ երկրորդական, աշխարհիկ, գրադէտի մը բոլոր անբնական շնորհքներով օժտուած, իր անբնական ոճով, վայելչագեղ գրելու կերպով կը նկատուէր վերանորոգէն աշխարհաբարին, անոր Եղիշիկը, ինչպէս ըսած էր Չօպանեան. ինքնայատուկ, մաքուր, արեւելքի մարդաբաններու պէս վայելուն էին անոր գրածները :

Սխալիկ, անմոռանալին Սխալիկ, համար
տաղանդ էր խոստատրդ կինը, դրական
խոսքերն մէջ թերեւս լաւագոյն դրաբարա-
դէտը, ճոխ բառերու մթերքով, կը զրէր
ոտանաւոր թէ արձակ, չողջողուն ու գե-
ղեցիկ լեզուով մը, միայն թէ... այնպէս

հնթադերև կու տար թէ քերթողական հուրը
չէր սարսուցնէր զինքը դրած առնելը, այն-
քան աղուոր, վսեմօրէն աղուոր էին դըր-
ուած քնելը :

Զապէլ Նսայեանի հաղիւ թռիչք առած
կարողութիւնը, որ անբաղդատելի պիտի
ըլլար օր մը, սկսած էր ճառագայթել ինչ-
պէս զարհան աղբ արեւելքի երկինքին վը-
րայ:

Սրբուհի Տիւսարի վէպերը, առաջինն-
ընդ որ թրքահայ կին մը հրատարակած ը-
լայ, մեծ աղմուկ հանելէ յետոյ, այլեւս
գրեթէ ոչ ոք կը կարդար, հակառակ
սլաշտպանած դեզին յոյժ շահեկան ըլլա-
լուն: Սակայն Տիկին Տիւսարի անունը
ձեռք չուրսողան էր մեր ամէնուն:

Տիլբրան Կամսարական , ձեռնոցաւոր , սկսած էր այն պահուն արդէն դէմք մը դառնալ մեր հորիզոնին վրայ , աղբասիրական (Համլիտի ներածին Հայր) մասնայատուկ ջանքերով սիրուն յօդուածներ , պատմուածքներ կը գրէր , որոնք ինքնուրոյն էին . իր գլուխ գործոցը պիտի ըլլար «Վարժապետին աղջիկը» , քիչ մը Հայկականութեամբ հոգեբանութեամբ :

Վահան Թէքէեանը, վախճաղեղ քեր-
թողը, հաղուադէպօրէն կը զրէն քերթ-
ուած մը, ան որ մեր բանաստեղծութեան
ըրմապետը պիտի ըլլար յետոյ:

Արշակ Զօրանեան իր ոսկի գրիչը վարդէ
հեղուկի մէջ թաթխած, արդէն զմայլե -
ցուցած էր մտաւոր աշխարհը: Տէմիրձի-
պաշէնի արժանաւոր աշակերտը, անոր
լոյս հետքերուն վրայէն կ'երթար, ներ -
շնչուած ու հիասթափիկ:

Արքիիսար Արքիիսրեան ալլեւս այն ծառն էր նոյաբերձ որուն չէկ տերեւները չողակնի վերածուած, իրեն հիւսած էին պսակներ անմահութեան :

Կային գեւ. նոր գրողներ գրական բոցով
 չբռնհռած, որոնց վրայ շատ անգամ պաղ
 ջուրի տուչ մը կ'իջեցնէր Թուրք գրաքերն-
 նութիւնը:

Պրիստյ մտաւորականները ընդհանրա -

